

## ՄԻԼԻՕՆԱՏԵՐ-ՄԱՐԴԱՍՊԱՆ

(ՄԱՐԿ ՏՈՒՀԵՆԻ)

Պատմուածք, որի համար ես ստացայ 50,000 դոլար  
(Զգրուած ընազրից)

Բժիշկ Ռուլիկամը նշանաւոր դիագնոստի ճշտապահութեամբ զննելով իմ թոյլ մարմինը, վճռագէս յայտնեց, թէ սպառնացող մօտիկ մահից խուսափելու համար միակ միջոցն է—անյապաղ ընդհատում իմ բոլոր թէ գրական և թէ ոչ գրական զբաղմունքների, լիսպին հանգիստ և օդափոխութիւն:

—Ճիշտ մի տարի դուք ձեր ձեռքը գրիչ չպիտի առնէք,  
—ասաց բժիշկը, —Ճիշտ մի տարի դուք պիտի բացառապէս զուարձանաք, ոչ մի լուրջ բանի մասին չմտածէք, նոյն իսկ լրազիր չկարդաք, և Ճիշտ մի տարի պիտի ճանապարհորդէք,  
իշարկէ ձեր ուժասպառ մարմին անհրաժեշտ բոլոր յարմարութիւններով, և միևնույն ժամանակ որքան կարելի է շուտշուտ փոխելով ընակութեան վայրը: Նախ գնացէք Փրանսիա, ապա Իտալիա, Անգլիա...

—Բժիշկ, —յարեցի ես, — դուք այնպէս էք խօսում, իբրև թէ ձեր առաջ կանգնողը գրական յամառ աշխատանքով ապրուստ հայթայթող մի հեղինակ չէ, այլ միլիոնատէք, որի համար արժէ միայն մի աւելորդ հարիւր կտրոն դէն ձգել... Դուք մոռանում էք, բժիշկ, որ եթէ գրական պարապմունքներս ընդհատեմ, կզրկուիմ ապրուստի բոլոր միջոցներից և ոչ թէ մի տարի, այլ նոյն իսկ մի ամիս ապրել լոյս աշխարհում—անհնար կըլինի ինձ համար...

—Իբրև բժիշկ իմ պարտքս է տալ ձեզ խորհուրդ, որ հիմնուած է բժշկական զիտութեան վրայ, —չոր-չոր պատասխանեց բժիշկ Ռուլիկամը. —Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թէ

Խորհուրդը գործադրելու համար ո՞րտեղից ճարել միջոցներ, այդ արդէն այլ զիտութեան գործ է:

«Ելլ զիտութեան», Օ՛, եթէ ես կարողանայի հասնել այդ այլ զիտութեանը, — մտածեցի ես զիտակոր տուն վերադառնալիս:

Անշուշտ տեսքս շատ տիտուր էր, որովհետեւ միստեր Զեմս Կլարկը՝ տանս դռան առաջ ինձ հանդիպելով, ասաց.

— Դուք նման էք կախաղանից չենց նոր իջեցրած մէկին:

Դուք չէք ճանաչում միստեր Զեմս Կլարկին, Օ՛, դա մի նշանաւոր մարդ է: Ո՞վ է նա և որտեղացի — ես ինքս էլ իսկապէս չզիտեմ. մէկ ասում է, թէ անզիաղի է, մէկ էլ՝ թէ բնիկ իրլանդացի, մի ուրիշ անգամ թէ մերսիկացի է. և այլն. Բայց չէ՛ որ լինում են մարդիք, որոնք չեն կարողանում ճիշտ սրոշել իրենց ազգութեանը:

Որտեղ եմ ծանօթացել Զեմսի հետ — նշյափէս չեմ յիշում. Կարծեմ մեր ծանօթութիւնը առհասարակ սկիզբ էլ չէ ունենալ Զեմս Կլարկը մի անգամ ժողովարանում ուղղակի սկսեց խօսել ինձ հետ՝ իբրև հին ծանօթի հետ, յետոյ արժանացրեց ինձ իւր այցելութեանը, ցցց տալով, թէ իմ տան մէջ նա մի և մտերիմ բարեկամն է, և այն օրից յաճախ լինում է ինձ մօտ իբրև անկոչ հիւր, ուտում է իմ նսխաճաշիկները, իմում է իմ զինիները, ծխում է իմ սիդարները և հաւատացնում ինձ, թէ այդ բոլորը նա անում միայն այն պատճառով, որ իրեն համարում է իմ տաղանդի վառ երկրպագու:

Ասենք, միայն ես չեմ օգտում Զեմս Կլարկի այսպիսի բարեհաճութեամբ. նա ունի մի խումբ ծանօթներ, ամենքի մօտ լինում է, ամենքի մօտ ուտում է, իմում, ծխում, շատերի հետ միասին գնում է թատրոն, ժողովարան և ծիարշաւի, և ամեն տեղ, ամենքի մօտ նա «մտերիմ բարեկամ» է, թէև ուրիշներն էլ, ճիշտ այնպէս, ինչպէս ես, բնաւ չեն կարողանում յիշել, թէ ինչպէս են ծանօթացել նրա հետ:

Նշյափէս ոչք չզիտէ, թէ իսկապէս ինչով է պարապում Զեմս Կլարկը և ինչ միջոցներով ապրում: Նրա լոկ կցկտուր պատմածներից ես այն եզրակացութեան եմ եկել, թէ նա իւր կեանքում նախ եղել է գինեվաճառի գործակատար, յետոյ զեղարուեստի քննադատ, ապա մի ինչոր անատոմիական (անդամահատական) թանգարանի բարտուղար, ձիաքարշ երկաթուղու կասսիր, մի գնդի համար կաղամքի կապալառու, թաղման բիւ-

ոսի տէր, մի մեծ օրաթերթի լրաբաղ, ամեւսնութիւններ կայ-  
ացնող ընկերութեան վերատեսուչ և պյլն և պյլն Խւր կեան-  
քումնա արդէն և հարուստ է եղել և աղքատ—գումարը—  
դա մի ուրախ մարդ է, որին գուք սիրով կուզէիք տեսնել ձեղ  
հետ սեղան նստած, չնայելով որ նա բոլորովին առանց բաշուե-  
լու դատարկում է ձեր շիշերը և ծխում ձեր ամենալաւ սի-  
դարները:

Երեկ Զեմս Կլարկը կամենում է, որ ամենը նրան ճա-  
նաչեն. Այդ իսկ պատճառով գրպանները միշտ լիբն են պյղե-  
տոմսերով, որ նա ցրում է ամեն տեղ աջ ու ձափ. և երբեմն էլ  
անգիտակցարար վայր է ձգում արխտոկրաների պարերեկոյթ-  
ներին, թատրոնների դահլիճներում; Ճիարշաւի հրապարակ-  
ներում, վաճառատներում. Այդետուսերի վրայ տպուած են՝ մի  
անկիւնում ինչ որ տարօրինակ տոհմանշան—սագի գլխով, եռո-  
տանի տոիւծ՝ տոաջի թաթով մի աւել բռնած. իսկ միւս ան-  
կիւնում մեծ տառերով գրուած է «Ձեմն Կլարկ, փողոց Ռոկ-  
ֆելլեր Տ. Գործերի համար ընդունելութիւն ցերեկը ժամի  
2—3», —Բայց արդեօք ինչ գործերից համար—այցետոմում  
ասուած չէ:

Ուշիւուշով ինձ ականջ դնելով Զեմս Կլարկը բոլորովին  
անվրդով նկատեց.

—Բայց և պյնպէս ձեր պատմածից ես դեռ չեմ հասկա-  
նում, թէ ինչու պիտի գուք պյնքան տիուր վշտահար տեսը  
ունենաք, որ կարծես ձեզ կախաղանից են իջեցրել.

—Միթէ չէք հասկանում, որ ես բժշկի մօտ մահուան դա-  
տավճիռ լսեցի, —գոչեցի ես զայրացած: —Դուք հօ գիտէք, որ  
միջոցներս թշլ չեն տալիս ինձ ոչ ընդհատնել աշխատանքս, ոչ  
էլ հեռանալ մի տարով: Ուրիշ կերպ կասած—մի տարուայ ըն-  
թացքում ես անպայման պիտի մեռնեմ,

—Իսկ իմ կարծիքով ձեր վիճակը պյնքան էլ վատ չէ,  
ինչքան ձեզ է թուու, —հանդիսա պատասխանեց Կլարկը, —  
շնորհիւ ձեր ժողովրդականութեան, հոչակին, շնորհիւ արար  
աշխարհին յայտնի ձեր տաղանդին, բանի մի տասնեակ հազար  
դոլար աշխատել, որը ձեզ բաւական է ոչ մի, ոչ էլ երկու  
տարի—այդ բոլորովին չնչին բան է:

—Չնչին բան... Հանա՞ք էք անում, միստեր Կլարկ. Ո՛չ  
թէ տասնեակ հազարներ, այլ դժուար է շահել նոյն իսկ հա-  
զար դոլար արդի ժամ հրատարակիչներից, մասաւանդ պյժմ,

երբ հիւանդութեան պատճառով անկարող եմ մի աչքի ընկնող բան զրել, որ փուրօր անէր, Ապա գտէք հրատարակիչ, որ համաձայնէր վճարել բանի մի տասնեակ հազար դոլլար:

—Հէնց ես ինքս առաջինը պատրաստ եմ իսկոյն և եթ վճարել ձեզ 50,000 դոլլար, —ասաց միստեր Կլարկը:

—Դո՞ւք, —բացականչեցի ես զարմացած:

—Այո՛, ես... Գուցէ դուք ասէք թէ ես հրատարակիչ չեմ, բայց ձեզ համար միեւնոյն չէ՛, թէ ում հետ գործ ունիք:

—Այո՛, այո՛, ի հարկէ, բայց... Բայց այդ 50,000 դոլլարի փոխարէն դուք երեկի կըպահանջէք, որ ես գրեմ ձեզ համար 55 հատորով մի վէպ, վերջաբանն էլ հետը...

—Բնաւ, —ընդհատեց ինձ միստեր Կլարկը, —ինձ վէպ պէտք չէ, այլ պատմուածքը. 500 տողով մի փոքրիկ պատմուածք:

—Եւ այդ 500 տող պատմուածքի համար, միստեր Կլարկ, դուք ուզում էք վճարել ինձ 50,000 դոլլար, այսինքն իւրաքանչիւր տողին 100 դոլլար. Բայց ձեր խելքը իւր տեղումն է, միստեր Կլարկ:

—Կարող եմ հաւատացնել որ նելքս գիեխո է, Սակայն ես մի փոքր բան պիտի ուղղեմ ասածիս մէջ. ոչ թէ ես եմ ուզում վճարել 50,000 դոլլար, այլ այն առետրական ընկերութիւնը, որ ես մասնաւորապէս այդ նպատակով կազմելու եմ; Ես դըժբախտաբար ազատ գումար չունիմ և կամայ ակամայ ստիպուած եմ այս հրատարակչական ձեռնարկութեան օգտից մաս հանել և իմ ծանօթ դրամատէրերին.

—Եւ դուք լո՛ւրջ էք ասում:

—Բոլորովին լուրջ:

—Լաւ, այդ գէպըում ես հէնց այսօր կըսկսեմ պատմուածքը.

Միայն հիւանդութեան պատճառով չեմ կարող վստահ ասել, թէ երբ պատրաստ կըլինի. դուք գիտէք, որ բժիշկը պահանջում էք ինձնից անմիջապէս ընդհատել բօլոր գրական աշխատանքներս...

—Եթէ դուք կարիք էլ չունիք աշխատելու, պատմուածքը կըգրեմ ես ինքս, —վրայ բերեց Կլարկը:

—Դո՞ւք, ես ձեզ չեմ հասկանում:

—Այո՛, պատմուածքը կըգրեմ ես, իսկ դուք միայն թոյլ տուէք տպագրել այն ձեր անունով, առէք ձեր, այսպէս ասած. Փիրմայի հովանաւորութեան տակ.

Ես աչքերու չոեցին

Մինչդեռ միստեր Կլարկը շարունակեց.

—Ես իշարկէ, չեմ կարող գրել այնպիսի տաղանդով, ինչ-պէս դուք, Խմ պատմութիւնը գուցէ կըլինի ձեր բոլոր գրուածք-ներից ամենից վատը, բայց միթէ այդ կարող է փոքրիկ աղ-դեցութիւն անգամ ունենալ ձեր արդէն յայտնի հոչակի, նը-շանաւոր գրադի հոչակի վրայ. Եթէ նոյն իսկ մէկը ասէ, թէ ձեր նոր գրուածքը միւներից աւելի թշլ է, չի կարելի հա-մեմատել ձեր միւս երկերի հետ, այն ժամանակ ամեն ոք իս-կոյն կաւելացնէ, թէ այդ բացառութիւն է, իսկ հէնց այդ բա-ցառութեան համար առաջարկում եմ ձեզ 50,000 դոլար ըն-կերութեան կողմից, որ կարող եմ այսօր իսկ կազմել.

—Միստեր Կլարկ, զդիտեմ իմ ուղեղս այսօր չի գործում, թէ ինչ որ խելքս գիտիս չէ, միայն թէ ես չեմ կարողանում ըմբռնել ձեր աստծները.

—Այդ պէտք էլ չէ, —պատասխանեց միստեր Կլարկը.

—Ստորագրեցէք միայն այսպիսի բովանդակութեամբ մի դոկումենտ. «Ես ներքոյ ստորագրեալս ծախեցի միստեր Զեմս Կլարկին և նրա ընկերակիցներին իմ նոր պատմուածքը, որի վերնագիրն է»...

Այստեղ միստեր Կլարկը մի բոգէ կանդ առաւ, քիչ մտա-ծեղ և ապա շարունակեց.

—«Որի վերնագիրն է «Միլիօնատէր մարդասպան», —և թօղնում եմ միստեր Կլարկին հրատարակել այս պատմուածքն այնպէս, ինչպէս ինքը Կլարկը կը կամենայ. Դրուածքիս և նրա հրատարակութեան իրաւունքի փոխարէն միստեր Կլարկը վը-ճարում է ինձ 50,000 դոլար, Միստեր Կլարկը պարտաւորուու է փողերը վճարել այս դօկումենտը ստորագրելու բոգէից հա-շուած բանութրս ժամուայ ընթացքում:

Սյս ենթագրեալ դօկումենտի խօսքերը միստեր Կլարկը հէնց իսկոյն գրի առաւ և քաղցրութեամբ առաջարկեց ինձ ստորագրել.

Իսկ ես... ես, մեղաւորս, մի ինչ որ տարօրինակ շփոթման մէջ, տեսնելով աչքիս առաջ միայն 50,000 դոլար, խօսքերը, չհամրերեցի և ապա շարժելով գրիչս ստորագրեցի աղդա-նունս:

Նոյն օրը երեկոյեան միստեր Կլարկն ինձ տուեց 50,000 դոլար արժողութեան չեկ և... հետեւալ առաւօտը Խորոպա

մեկնող շոգենաւի մի տոմսակ:

— Ներեցէք, որ պյաօր ես ձեզ մօտ չպիտի ընթրեմ; — Նը-  
կասեց նա. — Ես անպատճառ պիտի կարդամ ծեր (այս խօսքը  
նա մի առանձին տօնով արտասանեց) «Միլիոնատեր-մարդաս-  
պան» նոր գրուածքի սրբագրութիւնը. Պատմուածքն արդէն  
տպարանում է. Բարի Ճանապարհ ձեզ, ցանկանում եմ, որ ու-  
րախ անցնէք ժամանակը, — Ժպատլով աւելացրեց նա և հրա-  
մեշտ տուեց:

Հետևեալ առաւօտը ես արդէն ճանապարհին էի. Շոգե-  
նաւի մէջ ունէի փառաւոր սենեակ, ամեն յարմարութիւն և  
հանգիստ կարող էի մոտածել իմ հէնց նոր կատարած առեւրա-  
գրական արարքի մասին. Ասենք երկիւղ կրելով եղջի խոյթից  
ես աշխատում էի չմտածել այդ մասին, մասնաւանդ որ շարու-  
նակ աչքիս էր երկուամ միստեր Կլարկի կերպարանքը, որ իմ  
պատմուածքի պատճառով աւերռւելով՝ գնդակը ճակատին է  
ուղղում...

Ես եղայ Խտալիսյում, Գրանսիայում և Գերմանիայում և  
արդէն քիչ-շատ մոռացել էի միստեր Կլարկի հետ կատարած  
արարքս, երբ յանկարծ Լոնդոն գնալիս կայարանում գրավա-  
ճառի մստ նկատեղի երկու նորաձեւ-շըեղ բրոշիւր՝ փաթաթան  
մի բանդերօլով, որի վրայ խոչոր տառերով գրուած էր. «Մար-  
դասապան-միլիոնատէր» — Նշանաւոր գրող (այստեղ ահազին  
տառերով գրուած էր իմ ազգանունը) նորագոյն պատմուած-  
քը — շոտով վերցրէք — բաժանում է ծրի:

Եւ վեցցրի երկու բրոշիւրն էլ, վագոնը թռայ և սրտա-  
արոփ սկսեցի կարդալ իմ նորագոյն պատմուածքը: Բայց հա-  
զիւ աչքերով անցայ առաջին երեսը, որ վագոնի պատուհանի  
ապակիները օդը թռան՝ — այդ ես էի, որ կատաղած եփել էի  
բռունղըով պատուհանին Երկրորդ երեսը կարդալիս նստարա-  
նի կողքի փայտը ջարդուեց — այդ ես բարկութիւնիցս կոտ-  
րեցի, Երրորդ երեսը կարդալիս վագոնի յատակը ճքճքաց՝ —  
այդ էլ ես էի, որ յուսահատ ահազին ուժով ստքս եփել էի  
յատակին, Եթէ գնացըը չկանգնէր և կոնդուկտորը չհրաւիրէր  
ինձ դուրս դալ վագոնից, ես երևի կոչչացնէի ամբողջ վագոնը.  
Եւ այս բալորը միայն կարդացած իմ նորագոյն պատմուածքի  
աղդեղութեան տակ...

Եթէ ես ձեզ պատմեմ բանի էութիւնը և պատմուածքի

բովանդակութիւնը, դուք հաւանարար չեք ղարմանայ իմ  
բարկութեան, բարասրտութեան ու յուսահասութեան վրայ:

Աչա թէ ինչպէս էր սկսում կապոյտ բրոշիւրի մէջ իմ  
պատմուածքը.

— «Ճունս աւերուած է,— բացականչեց Հերբերդ Մակ-  
սվելը և բացեց այն գրասեղանի արկդիկը, որ նախընթաց  
օրը գնել էր... (այստեղ տեղ էր թողած կանկարասալիք  
վաճառող այն ֆիրմայի անուան համար, որ կը կամե-  
նայ դրա փոխարքէն վճարել Ձեմս Կլարկի եւ ընկ. Նոր  
բացած յայտարարութեանց ըիտոին երեք հազար դոլ-  
լար) ձեռքի արագ շարժմամբ նա դուրս հանեց այստեղ  
մի տարձանակ... (գործարանը, որ կը կամենայ այստեղ  
յիշուել, պիտի բարեհանէ վճարել Ձեմս Կլարկի եւ Ընկ.  
Նոր բացած յայտարարութեանց ըիտոին երեք հազար  
դոլլար) և մօտեցրեց բունքին: Հնչեց մի Խայտուցիչ պայ-  
թիւն և ինչ որ վայր ընկաւ ծանր գորգի վրայ, որ գնուած  
էր... (գորգեր վաճառող այն ֆիրման, որ կը կամենայ  
այստեղ յիշուած լինել, վճարում է երեք հազար դոլ-  
լար): Հենց այդ բոպէին միջանցքում լսուեց ոսնաձայն: Այդ  
միսս Մակսվելն էր վերագտանում պարահանդէսից, որ տեղի-  
ունէր (Նա, որ կը կամենայ այստեղ յիշուել, վճարում  
է երեք հազար դոլլար): Տիկինը հագել էր Խիտա-  
հեղ շորեր, այնպէս որ միայն արտաքին տեսքին ու շքեղու-  
թեանը նայելով ամեն մի կին կը ճանաչէր, որ կարուած են  
նշանաւոր կանացի գերձակ... (Ազգանունն այստեղ յիշել  
կամեցող ղերձակը վճարում է երեք հազար դոլլար): Միսս  
Մակսվելի աջքերի առաջ հետևեալ պատկերը ներկայա-  
ցաւ միստեր Հերբերտաց յենուել էր արհեստական մարմարից,  
շինած բարձր սիւնին, որպիսիք այնքան հմտութեամբ պատ-  
րաստում է... (Դորձարանատէրը, որ կը կամենայ այստեղ  
անուանուել, վճարում է Ձեմս Կլարկի եւ Ընկ. Նոր բա-  
ցած յայտարարութեանց ըիտոին երեք հազար դոլլար),  
իսկ նրա ոտների մօտ ընկած էր մի հսկայ արծիւ, որ կար-  
ծես թեերն էր թափահարում: Բայց այդ միայն իրտուիլակ  
էր՝ պատրաստուած... (Այն գործարանատէրը, որ կամենում  
է յիշուած լինել, վճարում է երեք հազար դոլլար) ... և  
այլն և այլն և այլն:

Ներկրուրդ կարմիր բրոշիւրի մէջ բոլոր կէտերով նշանա-

կած տեղերը արդէն լցուած էին համապատասխան Փիրմաների անուններով։ Ակներև է, որ միստեր Զեմս Կլարկի յշյսերը բոլորովին պահուած են. իմ պատմուածքի օգնութեամբ ուկ-լամներ տարածելու նոր եղանակը առեւրական շրջաններում համակրութիւն է գտել. Այստեղ իշարկէ նշանակութիւն է ունեցել ոչ այնքան իմ ժողովրդականութիւնը, իբրև գրողի, օր-քան միստեր Կլարկի ծանօթները. Պատմուածքի մէջ բոլոր Փիրմաների թիւը հասնում էր 113-ի, կամ ուրիշ կերպ ասած միստեր Կլարկը բըօշխւրում զետեղած ուկլամներից ստացել է զուտ օգուտ մօտաւորապէս 200,000 դոլար.

Բայց այս դեռ բոլորը չեւ:

Կարմիր բըօշխերի վերջում աւելացրած էր, թէ Փիրմաների անունները, ինչպէս նշանակուած են կարմիր բըօշխերում, ապօւած են միայն մի միլիեն օրէնակի մէջ: Խոկ երկրորդ միլիոնի համար, որ արդէն պատրաստում է տպագրութեան յանձնելու, ընդունելու են նյու գնով ուրիշ Փիրմաների անուններ։ Ես իշարկէ յուսահատութեան մէջ էի, Խմ' իբրև գրողի համբաւը ոչնչացած էր։

Լոնդոն հասնելով առաջին գործ եղաւ շտապել զինավաճառատուն. գնեցի մի ատրճանակ և վճռեցի իսկոյն և եթ վերադառնալ Ամերիկա միստեր Զեմս Կլարկին սպանելու համար։ Եետոյ ես փոխեցի այդ գիտաւորութիւնս և աւելի լաւ համարեցի ինքս ինձ սպանել. Բայց յիշեցի, որ այդ անելի ես կը ապրածէ իմ «միլիոնատէր-մարդասպան» նորագոյն գրուածքս։ Աերջ ի վերջոյ ասրճանակը Թայմսը նետեցի և ինձ միիթարելով «չարին մի հակառակուի» խօսքերով՝ «Մարդասպան-միլիոնատէր» չարարաստիկ պատմուածքի պատմութիւնն անուշադիր թողին։ Մի բան միայն արի—ազնիւ խօսք տուի ինքս ինձ, որ Զեմս Կլարկը էլ չպիտի ուտէ իմ նախաճաշիկները, իսկ իմ զինիները և ծիւէ իմ սիգարները։ Ասենք, նա այլեկարիբ չունի դրանց, իրքեւ վերատեսուչ չԶեմս Կլարկի և ընկազմած յայտարարութեանց և ուկլամների համաշխարհային բիւռօ» Փիրմայի, նա նիւ-նօրկում ունի մի փառաւոր տուն, հիմանալի խոչանոց, հրաշալի մառան... Եւ այդ բոլորը տուել է նրան «Միլիոնատէր մարդասպանը»։

Մօտ օրերս Զեմս Կլարկից մի նախակ ստացայ, ուր նա հարցնում է, թէ արդեօք չե՞մ կամենում ծախել իրեն մի պատմուածք էլ նյու պայմաններով։

Յանդուգն մարդ։

Զգրուած ընագրի Ռուաակի ոռուերէն թարգմանութիւնից թարգմանեց Յ. Բ.